

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Կոդ TRM15-0003-06 PUB	Խմբագրություն 70
Կազմեց	Հաստատված
Բիզնես գործընթացների կառավարման բաժին	Վարչության 08/02/2021թ. թիվ 05 արձանագրությամբ Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան _____
Կիրառման ոլորտ	Վարկավորման, հաճախորդներին տեղեկատվության տրամադրման և տեղեկատվության հրապարակման գործընթացներում ներգրավված տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ:
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Մանրաձախ բիզնեսի վարչություն, Բիզնես վարկավորման վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	15/02/2021թ.
Ուժը կորցնելու ամսաթիվ	

1. Նպատակը

Վարկավորման պայմաններով և սակագներով (Այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (Այսուհետ՝ Բանկ) կողմից վարկերի տրամադրման հիմնական պայմանները:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. Պայմանները մշակվել է հիմք ընդունելով Բանկի Խորհրդի կողմից հաստատված վարկավորման գործընթացները կարգավորող ներքին իրավական ակտերը:
- 2.2. Պայմանները հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ:
- 2.3. Սույն պայմաններից շեղումներով վարկերի տրամադրման որոշումները կայացվում են Գլխավոր վարկային կոմիտեի կողմից: Գործող վարկերի, սույն պայմաններից շեղումներով վերանայման որոշումները կայացվում են Բանկում գործող վարկային կոմիտեների կողմից՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված լիազորությունների սահմաններում: Սույն պայմաններից շեղումներով վարկերի տրամադրման և պայմանների վերանայման հայտերը Բանկի վերոնշյալ լիազոր մարմինների քննարկմանը կարող են ներկայացվել միայն բավարար հիմնավորվածության պարագայում:
- 2.4. Սույն Պայմաններով սահմանված տոկոսադրույքների միջակայքի սահմաններում կոնկրետ տոկոսադրույքը որոշվում է Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացնող լիազոր մարմնի կողմից՝ հաշվի առնելով տվյալ պահին շուկայում գործող միջին տոկոսադրույքները, ինչպես նաև վարկառուի գործունեության բնույթը, վարկավորման արժույթը, վարկավորման ժամկետը, գրավի իրացվելիությունը և այլ չափորոշիչներ, որոնք սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով:
- 2.5. Սույն պայմաններով նշված ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք են հանդիսանում ՀՀ քաղաքացի հանդիսացող և ՀՀ քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձինք, համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի:
- 2.6. Սույն Պայմաններով սահմանված բոլոր վարկատեսակների գծով վարկային հայտի ուսումնասիրման վճարները գանձվում են հաճախորդից միանվագ և չեն վերադարձվում՝ անկախ Բանկի կողմից ընդունված վարկային հայտի դրական կամ բացասական որոշումից:
- 2.7. Սույն Պայմաններով սահմանված, բոլոր վարկատեսակների գծով վարկային հաշվի սպասարկման վճարը գանձվում է միանվագ կարգով՝ վարկի տրամադրման պահին:
- 2.8. Սույն Պայմաններով սահմանված վարկի մարման եղանակները ունեն հետևյալ նշանակությունը՝
 - «Անուիտետային» - (հավասարաչափ ամսական մարում), որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները,
 - «Ջսպանակաձև» - (փոփոխական ամսական մարում), որի մեջ մայր գումարի մարումը մտնում է հավասար չափով, իսկ կուտակված տոկոսները՝ փոփոխական:
 - «Միանգամյա» - Վարկի մայր գումարի մարումը կատարվում է ժամկետի վերջում, իսկ տոկոսագումարները ամենամսյա:
- 2.9. Վարկի մարման ժամանակացույցը խախտելու դեպքում վարկի ժամկետանց մասի վրա կարող է կիրառվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, որը ամրագրվում է վարկային պայմանագրով:
- 2.10. Սույն «Պայմաններով և սակագներով» սահմանված պրոդուկտների հիման վրա կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում առաջարկվող վարկավորման պայմանները, այդ թվում ապառիկ առևտրի ֆինանսավորման պայմանները յուրաքանչյուր կազմակերպության համար առանձին տեղակայվում են Բանկի ներքին ցանցի [Օ:ՆՀամագործակցության Պայմանագրեր](#) թղթապանակում:

• Ֆիզիկական անձանց տրամադրվող անհատական վարկեր ըստ պրոդուկտների

- 1) [Բնակարանային հիփոթեքային վարկ](#)
- 2) [Բնակարանային հիփոթեքային վարկ լողացող տոկոսադրույքով](#)
- 3) [Բնակարանային հիփոթեքային վարկեր /առանց եկամուտների վերլուծության/](#)
- 4) [Առևտրային հիփոթեքային վարկ](#)
- 5) [Հիփոթեքային վարկ \(Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրի շրջանակներում\)](#)
- 6) [Հիփոթեքային վարկեր \(Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎԿԿ ՓԲԸ Բնակարանային ֆինանսավորում 4-րդ փուլ ծրագրի շրջանակներում տրամադրող\)](#)
- 7) [Վերանորոգման վարկեր \(Ազգային Հիփոթեքային Ընկերություն «Ջերմ Օջախ» ծրագրի շրջանակներում\)](#)
- 8) [Հիփոթեքային վարկ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»](#)
- 9) [Ավտոմեքենայի ձեռք բերման նպատակով վարկ](#)
- 10) [Գույքի գրավով ապահովված անհատական վարկ \(վարկունակության գնահատմամբ\)](#)
- 11) [Գույքի գրավով ապահովված անհատական վարկ \(առանց եկամուտների\)](#)
- 12) [Երաշխավորությամբ ապահովված անհատական վարկ](#)
- 13) [«ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ» սպառողական վարկեր \(ծրագրային\)](#)
- 14) [Ոսկու գրավով \(լոմբարդային\) վարկ](#)
- 15) [Ոսկու գրավով \(լոմբարդային\) վարկեր վարկունակության գնահատմամբ](#)
- 16) [SINGLE TOUCH վարկատեսակ](#)
- 17) [Օվերդրաֆտ վճարային քարտով](#)
- 18) [Օվերդրաֆտներ վճարային քարտերով \(վարկային քարտեր\) Բանկի հաճախորդներին](#)
- 19) [Visa Infinite վճարային քարտերով տրամադրվող վարկային սահմանաչափ](#)
- 20) [Աշխատավարձային նախագծի շրջանակներում տրամադրվող օվերդրաֆտների միասնական պայմաններ](#)
- 21) [Ավանդի գրավով ապահովված վարկային սահմանաչափ](#)
- 22) [Վարկեր վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ծրագրի շրջանակներում](#)

• Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող առևտրային վարկեր ըստ պրոդուկտների

- 1) [Քիզնես վարկ](#)
- 2) [Միկրոքիզնես վարկ](#)
- 3) [Փոքր և միջին քիզնեսի վարկավորում](#)
- 4) [Փոքր և միջին քիզնեսի վարկավորում «Գործընկեր»](#)
- 5) [Վերականգնվող վարկային գիծ](#)
- 6) [Չվերականգնվող վարկային գիծ](#)
- 7) [Հաշվի վարկավորում](#)
- 8) [«ԳՀՀ - Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի պայմաններ](#)
- 9) [Պարզ քիզնես վարկ \(առանց վերլուծության կատարման\)](#)
- 10) [Պարզ քիզնես վարկ \(պարզեցված վերլուծության կատարմամբ\)](#)

- 11) ՀՀ կառավարության առաջին միջոցառման ներքո տրամադրվող վարկ
 12) ՀՀ կառավարության երրորդ միջոցառման ներքո տրամադրվող վարկ
 13) «Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի պայմաններ
 14) Վարկեր Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ծրագրի շրջանակներում

- Բանկային երաշխիքներ
- Ֆակտորինգային ֆինանսավորում
- Աշխատավարձային նախագծի պայմաններ

3. Ֆիզիկական անձանց տրամադրվող վարկեր

3.1. Հիփոթեքային վարկեր

3.1.1. Բնակարանային հիփոթեքային վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է բնակելի նշանակության անշարժ գույքի՝ բնակարանի, առանձնատան, բնակելի տան (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռք բերման կամ վերանորոգման կամ առանձնատան, բնակելի տան կառուցապատման նպատակով: Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերի տրամադրման համար հիմք է ընդունվում կատարվելիք ծախսերի նախահաշիվը:	
2.	Ովքեր կարող են դիմել	18 – 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:	
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Մինչև 80,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
		Վերանորոգում	Մինչև 10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Մինչև 180 ամիս
		Վերանորոգում	Մինչև 84 ամիս
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	ՀՀ դրամ	13%-17%
		ԱՄՆ դոլար	9%-12%
		Եվրո	7%-10%
7.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:	
9.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:	
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	1. Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը: 2. Որպես վարկի ապահովման միջոց կարող է հանդիսանալ անշարժ գույքի գնման իրավունքը, որի դեպքում Բանկը կարող է պահանջել, որ կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրված դրամական միջոցները կառուցապատողի կողմից գրավադրվեն հօգուտ Բանկի ի ապահովում՝ ա. շենքի կառուցման ավարտից հետո անշարժ գույքը գնորդին սեփականության իրավունքով հանձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, բ. կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարը գնորդին վերադարձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, գ. Շենքի կառուցման ավարտից և անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական ստանալուն զուգահեռ անշարժ գույքի նկատմամբ բանկի գրավի իրավունքի գրանցման պարտավորության կատարման,	
11.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ¹	Առաջնային շուկայից (կառուցապատողից) ձեռք բերում ²	Գնահատված արժեքի մինչև 90%
		Երկրորդային շուկայից ձեռք բերում	Գնահատված արժեքի մինչև 85%
		Կառուցապատում և վերանորոգում	Գնահատված արժեքի մինչև 70%
12.	Ապահովագրություն	Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:	
13.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/ Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերը տրամադրվում են միանվագ կամ փուլային, որը սահմանվում է Վարկի տրամադրման որոշումը կայացնող Լիազոր մարմնի կողմից: Վարկը փուլերով տրամադրման դեպքում, փուլերը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված կատարվելիք ծախսերի նախահաշիվը, վարկի ժամկետը, գումարի չափը, Հաճախորդի վարկունակությունը:	
14.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկային հայտի ուսումնասիրման վճար՝ 10,000 ՀՀ դրամ:	
		վարկային հաշվի սպասարկման վճար՝ վարկի մայր գումարի 0,3%:	

¹ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

² Անավարտ շինության դեպքում (Կառուցապատողից ձեռքբերման դեպքում) որպես գրավի արժեք հանդիսանում է կառուցապատողի կողմից պրամադրված տեղեկանքում և հետագայում առուվաճառքի պայմանագրում նշված առուվաճառքի գինը

15.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուին Բանկում մուտքագրում է կանխավճար³, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Վարկառուին կարող է չմուտքագրել կանխավճար, փոխարենը իրականացնելով լրացուցիչ անշարժ գույքի գրավադրում, որի դեպքում Վարկառուին տրամադրվող Վարկի գումարը չպետք է գերազանցի ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը՝ պահպանելով 70% «Վարկ/գրավ» հարաբերակցությունը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանանագրեր/համաձայնագրեր: - Անշարժ գույքի գնման իրավունքը ձեռք բերելու դեպքում, որպես վարկի ապահովման միջոց կարող է հանդիսանալ անշարժ գույքի գնման իրավունքը, որի դեպքում Բանկը կարող է պահանջել, որ կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից մուտքագրված դրամական միջոցները կառուցապատողի կողմից գրավադրվեն հոգուտ Բանկի՝ ի ապահովում՝ ա. շենքի կառուցման ավարտից հետո անշարժ գույքը գնորդին սեփականության իրավունքով հանձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, բ. կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարը գնորդին վերադարձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, գ. Շենքի կառուցման ավարտից և անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական ստանալուն զուգահեռ անշարժ գույքի նկատմամբ բանկի գրավի իրավունքի գրանցման գնորդի պարտավորության կատարման
16.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.2. Բնակարանային հիփոթեքային վարկեր լողացող տոկոսադրույքով

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է բնակելի նշանակության անշարժ գույքի՝ բնակարանի, առանձնատան, բնակելի տան (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռք բերման կամ վերանորոգման կամ առանձնատան, բնակելի տան կառուցապատման նպատակով: Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերի տրամադրման համար հիմք է ընդունվում կատարվելիք ծախսերի նախահաշիվը:		
2.	Ովքեր կարող են դիմել	18 – 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:		
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո		
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Մինչև 80,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	
		Վերանորոգում	Մինչև 10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	ՀՀ դրամ	Մինչև 180 ամիս
		Վերանորոգում	ԱՄՆ դոլար, Եվրո	Մինչև 240 ամիս
			Մինչև 84 ամիս	
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Վարկի տրամադրման առաջին 36 ամիսներին	37-րդ ամսվանից սկսած
		ՀՀ դրամ	Սկսած 11 % - ից	4.5% + փոփոխուն բաղադրիչ
		ԱՄՆ դոլար	Սկսած 8.5 % - ից	8% + փոփոխուն բաղադրիչ
		Եվրո	Սկսած 7.5 % - ից	7.5% + փոփոխուն բաղադրիչ
		Վերանորոգում	Վարկի տրամադրման առաջին 12 ամիսներին	13-րդ ամսվանից սկսած
		ՀՀ դրամ	Սկսած 12 % - ից	5.5% + փոփոխուն բաղադրիչ
		ԱՄՆ դոլար	Սկսած 9.5 % - ից	9% + փոփոխուն բաղադրիչ
		Եվրո	Սկսած 8.5 % - ից	8.5% + փոփոխուն բաղադրիչ
7.	Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգը	Լողացող տոկոսադրույքը հավասար է հաստատուն և փոփոխուն բաղադրիչների հանրագումարին ($SL = SC + SF$): Փոփոխուն բաղադրիչը (SF) հավասար է՝ ՀՀ դրամի դեպքում՝ Առաջնային ցուցանիշ - 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը. Հղում՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx Երկրորդային ցուցանիշ - ՀՀ ԿԲ լոմբարդային ռեպո տոկոսադրույք. Հղում՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx ԱՄՆ դոլարի դեպքում՝ Առաջնային ցուցանիշ - ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (BBA/ICE LIBOR USD 6 Month). Հղում՝ https://fred.stlouisfed.org/series/USD6MTD156N		

³ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

evocaBANK		Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 70 15/02/2021թ.	
		Երկրորդային ցուցանիշ - ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվի բաց շուկայական գործառնությունների տոկոսադրույք (FOMC's target federal funds rate). Հղում՝ https://www.federalreserve.gov/monetarypolicy/openmarket.htm Եվրոյի դեպքում՝ Առաջնային ցուցանիշ-Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (EMMI EURIBOR 6 Month). Հղում՝ https://www.emmi-benchmarks.eu/euribor-org/euribor-rates.html Երկրորդային ցուցանիշ-Եվրոպական կենտրոնական բանկի հիմնական վերաֆինանսավորման գործառնությունների տոկոսադրույք (interest rate on the main refinancing operations (MRO)). Հղում՝ https://www.ecb.europa.eu/stats/policy_and_exchange_rates/key_ecb_interest_rates/html/index.en.html			
8.	Լողացող տոկոսադրույքի վերանայման կարգը	Բանկը տարին երկու անգամ փոփոխում է լողացող տոկոսադրույքի փոփոխման բաղադրիչը (ՏՓ) և այդ մասին տեղեկատվությունը ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը և հուլիսի 15-ը հրապարակում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:			
9.	Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմեր	±4%			
10.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում			
11.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:			
12.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:			
13.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	1. Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը: 2. Որպես վարկի ապահովման միջոց կարող է հանդիսանալ անշարժ գույքի գնման իրավունքը, որի դեպքում Բանկը կարող է պահանջել, որ կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրված դրամական միջոցները կառուցապատողի կողմից գրավադրվեն հօգուտ Բանկի ի ապահովումն՝ ա. շենքի կառուցման ավարտից հետո անշարժ գույքը գնորդին սեփականության իրավունքով հանձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, բ. կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարը գնորդին վերադարձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, գ. Շենքի կառուցման ավարտից և անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական ստանալուն զուգահեռ անշարժ գույքի նկատմամբ բանկի գրավի իրավունքի գրանցման պարտավորության կատարման,			
14.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ⁴	Առաջնային շուկայից (կառուցապատողից) ձեռք բերում ⁵	Գնահատված արժեքի մինչև 90%		
		Երկրորդային շուկայից ձեռք բերում	Գնահատված արժեքի մինչև 85%		
		Կառուցապատում և վերանորոգում	Գնահատված արժեքի մինչև 70%		
15.	Ապահովագրություն	Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:			
16.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/ Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերը տրամադրվում են միանվագ կամ փուլային, որը սահմանվում է Վարկի տրամադրման որոշումը կայացնող Լիազոր մարմնի կողմից: Վարկը փուլերով տրամադրման դեպքում, փուլերը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված կատարվելիք ծախսերի նախահաշիվը, վարկի ժամկետը, գումարի չափը, Հաճախորդի վարկունակությունը:			
17.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկային հայտի ուսումնասիրման վճար՝ 10,000 ՀՀ դրամ:			
		վարկային հաշվի սպասարկման վճար՝ վարկի մայր գումարի 0,3%:			
18.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար⁶, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Վարկառուն կարող է չմուտքագրել կանխավճար, փոխարենը իրականացնելով լրացուցիչ անշարժ գույքի գրավադրում, որի դեպքում Վարկառուին տրամադրվող Վարկի գումարը չպետք է գերազանցի ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը՝ պահպանելով 70% «Վարկ/գրավ» հարաբերակցությունը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված			

⁴ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

⁵ Անավարտ շինության դեպքում (Կառուցապատողից ձեռքբերման դեպքում) որպես գրավի արժեք հանդիսանում է կառուցապատողի կողմից տրամադրված տեղեկանքում և հետագայում առուվաճառքի պայմանագրում նշված առուվաճառքի գինը

⁶ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

		նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանագրեր/համաձայնագրեր: - Անշարժ գույքի գնման իրավունքը ձեռք բերելու դեպքում, որպես վարկի ապահովման միջոց կարող է հանդիսանալ անշարժ գույքի գնման իրավունքը, որի դեպքում Բանկը կարող է պահանջել, որ կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից մուտքագրված դրամական միջոցները կառուցապատողի կողմից գրավադրվեն հոգուտ Բանկի՝ ի ապահովում՝ ա. շենքի կառուցման ավարտից հետո անշարժ գույքը գնորդին սեփականության իրավունքով հանձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, բ. կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարը գնորդին վերադարձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, գ. Շենքի կառուցման ավարտից և անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական ստանալուն զուգահեռ անշարժ գույքի նկատմամբ բանկի գրավի իրավունքի գրանցման գնորդի պարտավորության կատարման
19.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.3. Բնակարանային հիփոթեքային վարկեր (առանց եկամուտների վերլուծության)

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում բնակարանի ձեռք բերման նպատակով:		
2.	Ովքեր կարող են դիմել	18 – 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:		
3.	Վարկավորման արժույթը	ԱՄՆ դոլար, Եվրո		
4.	Վարկավորման գումար	4,000-50,000		
5.	Վարկի մարման ժամկետը	Մինչև 120 ամիս		
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ (հաստատուն)	ԱՄՆ դոլար	Վարկ/գրավ մինչև 60%	11%
			Վարկ/գրավ 60,1%-70%	12%
		Եվրո	Վարկ/գրավ մինչև 60%	9%
			Վարկ/գրավ 60,1%-70%	10%
7.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում		
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:		
9.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:		
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Երևան քաղաքում գտնվող բնակարան: Բացի անշարժ գույքի գրավադրումից վարկառուից պահանջվում է նաև՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող առնվազն մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն:		
11.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ⁷	Գնահատված արժեքի մինչև 70%		
12.	Ապահովագրություն	Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:		
13.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/		
14.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկային հաշվի սպասարկման վճար՝ վարկի գումարի 0.3%-ի չափով,		
15.	Վարկունակության գնահատում	Հաճախորդը չպետք է ունենա վերջին 1 տարվա ընթացքում վարկային պարտավորությունների գծով դասակարգումներ և մարումների գծով ուշացման օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:		
16.	Այլ պայմաններ	- Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար⁸, որը սառեցվում է մինչև վարկի տրամադրումը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանագրեր/համաձայնագրեր: - Գրավատուն և Վարկառուն պետք է լինի նույն անձը - Հաճախորդը պետք է ներկայացնի եկամտի աղբյուրը		
17.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող		

⁷ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

⁸ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.4. Առևտրային հիփոթեքային վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է առևտրային նշանակության անշարժ գույքի՝ արտադրական, հասարակական կամ այլ առևտրային տարածքի, շինության (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռքբերման, վերանորոգման, արդիականացման կամ կառուցապատման նպատակով: Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերի տրամադրման համար հիմք է ընդունվում կատարվելիք ծախսերի նախահաշիվը:	
2.	Ովքեր կարող են դիմել	18– 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:	
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	10,000,000-ից մինչև 120,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
		Վերանորոգում	5,000,000-ից մինչև 30,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Մինչև 180 ամիս
		Վերանորոգում	Մինչև 84 ամիս
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	ՀՀ դրամ	13%-17%
		ԱՄՆ դոլար	9%-12%
		Եվրո	7%-10%
7.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:	
9.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը :	
10.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ⁹	Առաջնային շուկայից (կառուցապատողից) ձեռք բերում ¹⁰	Գնահատված արժեքի մինչև 90%
		Երկրորդային շուկայից ձեռք բերում	Գնահատված արժեքի մինչև 85%
		Կառուցապատում և վերանորոգում	Գնահատված արժեքի մինչև 70%
11.	Ապահովագրություն	Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:	
12.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/ Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերը տրամադրվում են միանվագ կամ փուլային, որը սահմանվում է Վարկի տրամադրման որոշումը կայացնող Լիազոր մարմնի կողմից: Վարկը փուլերով տրամադրման դեպքում, փուլերը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված կատարվելիք ծախսերի նախահաշիվը, վարկի ժամկետը, գումարի չափը, Հաճախորդի վարկունակությունը:	
13.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկային հայտի ուսումնասիրման վճար՝ 20,000 ՀՀ դրամ: վարկային հաշվի սպասարկման վճար՝ վարկի մայր գումարի 0,3 %:	
14.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար¹¹, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Վարկառուն կարող է չմուտքագրել կանխավճար, փոխարենը իրականացնելով լրացուցիչ անշարժ գույքի գրավադրում, որի դեպքում Վարկառուին տրամադրվող Վարկի գումարը չպետք է գերազանցի ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը՝ պահպանելով 70% «Վարկ/գրավ» հարաբերակցությունը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանանագրեր/համաձայնագրեր: - Անշարժ գույքի գնելու իրավունքը ձեռք բերելու դեպքում, որպես վարկի ապահովման միջոց կարող է հանդիսանալ անշարժ գույքի գնման իրավունքը, որի դեպքում Բանկը կարող է պահանջել, որ կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրված դրամական միջոցները կառուցապատողի կողմից գրավադրվեն հոգուտ Բանկի ի ապահովումն՝ ա. շենքի կառուցման ավարտից հետո անշարժ գույքը գնորդին սեփականության իրավունքով	

⁹ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

¹⁰ Անավարտ շինության դեպքում (Կառուցապատողից ձեռքբերման դեպքում) որպես գրավի արժեք հանդիսանում է կառուցապատողի կողմից տրամադրված փողեկանքում և հետագայում առուվաճառքի պայմանագրում նշված առուվաճառքի գինը:

¹¹ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով:

		հանձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, բ. կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարը գնորդին վերադարձնելու կառուցապատողի պարտավորության կատարման, գ. Շենքի կառուցման ավարտից և անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական ստանալուն զուգահեռ անշարժ գույքի նկատմամբ բանկի գրավի իրավունքի գրանցման պարտավորության կատարման
15.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.5. Հիփոթեքային վարկեր (Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրի շրջանակներում)

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է բնակելի նշանակության անշարժ գույքի՝ բնակարանի, առանձնատան, բնակելի տան (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռք բերման կամ վերանորոգման կամ առանձնատան, բնակելի տան կառուցապատման նպատակով: Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերի տրամադրման համար հիմք է ընդունվում կատարվելիք ծախսերի նախահաշիվը:		
2.	Ովքեր կարող են դիմել	18–58 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:		
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ		
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	2,000,000- 35,000,000 ՀՀ դրամ	
		Վերանորոգում	1,000,000- 10,000,000 ՀՀ դրամ	
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	120 – 240 ամիս	
		Վերանորոգում	60 – 84 ամիս	
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	2,000,000- 35,000,000 ՀՀ դրամ	9.8%
		Վերանորոգում	10.8%	
7.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում		
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:		
9.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:		
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ բնակելի անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը և լրացուցիչ բնակելի անշարժ գույք:		
11.	Վարկ/գրավ հարաբերակցությունը	1. Ոչ ավելի, քան բնակելի անշարժ գույքի արժեքի 70%¹² 2. Ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 90%, եթե գրավադրվում է լրացուցիչ բնակելի անշարժ գույք.ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 70% 3. Ձեռքբերման վարկերի դեպքում (եթե գրավ է դրվում միայն ձեռքբերվող գույքը) վարկի գումարը կարող է կազմել գրավի արժեքի առավելագույնը 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով		
12.	Ապահովագրություն	1. Գրավադրված գույքի ապահովագրություն 2. Վարկառուի և համավարկառու/ներ/ի (առկայության դեպքում)՝ ղօբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրության վկայագրերը: Ընդ որում համավարկառու/ներ/ի առկայության դեպքում ղօբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրությունը կատարվում է վարկի գումարից վարկառուի և համավարկառու/ներ/ի եկամուտներին համամասն: 3. Վարկի գումարը կարող է կազմել առավելագույնը գրավի արժեքի 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով վճարում		
13.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/		
14.	Բանկի կողմից գանձվող	Վարկային հայտի ուսումնասիրման վճար - 10.000.0 ՀՀ դրամ:		

¹² Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 70 15/02/2021թ.
	միջնորդավճարներ	Վարկային հաշվի սպասարկման վճար - վարկի գումարի 0.5%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 20,000 ՀՀ դրամ:
15.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուին Բանկում մուտքագրում է կանխավճար¹³, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանագրեր/համաձայնագրեր: - Բնակելի տների/առանձնատների կառուցման նպատակով վարկերի տրամադրման դեպքում վարկի առավելագույն գումարը չպետք է գերազանցի հաճախորդի կողմից ներկայացված կառուցման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80 տոկոսը: - Կառուցման նպատակով վարկերը պետք է տրամադրվեն մասնաբաժիններով (տրանշերով), ընդ որում վարկի վերջին մասնաբաժնով պետք է ֆինանսավորվի շինարարական աշխատանքների վերջին փուլը և չպետք է գերազանցի վարկի գումարի 20 տոկոսը:
16.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավորման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.6. Հիփոթեքային վարկեր (Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎՎԿ ՓԲԸ Բնակարանային ֆինանսավորում 4-րդ փուլ ծրագրի շրջանակներում տրամադրվող)

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է՝ - բնակելի նշանակության <u>Էներգաարդյունավետ</u> կամ <u>մարզում</u> գտնվող անշարժ գույքի՝ բնակարանի, առանձնատան, բնակելի տան (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռք բերման նպատակով <u>մարզում</u> գտնվող անշարժ գույքի կամ <u>Էներգաարդյունավետ</u> վերանորոգման <u>նպատակով</u> <u>Էներգաարդյունավետ</u> կամ <u>մարզում</u> գտնվող առանձնատան, բնակելի տան կառուցապատման նպատակով:	
2.	Ովքեր կարող են դիմել	18– 58 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:	
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ	
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	2,000,000- 35,000,000 ՀՀ դրամ
		Վերանորոգում	2,000,000- 10,000,000 ՀՀ դրամ
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	120 – 240 ամիս
		Վերանորոգում	60 – 84 ամիս
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	8.8%
		Վերանորոգում	9.8%
7.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:	
9.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:	
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ բնակելի անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը և լրացուցիչ բնակելի անշարժ գույք:	
11.	Վարկ/գրավ հարաբերակցությունը	- Ոչ ավելի, քան բնակելի անշարժ գույքի արժեքի 70%¹⁴ - Ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 90%, եթե գրավադրվում է լրացուցիչ բնակելի անշարժ գույք: ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 70% - Ձեռքբերման վարկերի դեպքում (եթե գրավ է դրվում միայն ձեռքբերվող գույքը) վարկի գումարը կարող է կազմել գրավի արժեքի առավելագույնը 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով	
12.	Ապահովագրություն	1. Գրավադրված գույքի ապահովագրություն	

¹³ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

¹⁴ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

		Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 70 15/02/2021թ.
		2. Վարկառուի և համավարկառու/ներ/ի (առկայության դեպքում)՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրության վկայագրերը: Ընդ որում համավարկառու/ներ/ի առկայության դեպքում դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրությունը կատարվում է վարկի գումարից վարկառուի և համավարկառու/ներ/ի եկամուտներին համամասն: 3. Վարկի գումարը կարող է կազմել առավելագույնը գրավի արժեքի 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով վճարում	
13.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/ Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերը տրամադրվում են միանվագ կամ փուլային, որը սահմանվում է Վարկի տրամադրման որոշումը կայացնող Լիազոր մարմնի կողմից: Վարկը փուլերով տրամադրման դեպքում, փուլերը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված կատարվելիք ծախսերի նախահաշիվը, վարկի ժամկետը, գումարի չափը, Հաճախորդի վարկունակությունը:	
14.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկային հաշվի ուսումնասիրման վճար - 10.000,0 ՀՀ դրամ: Վարկային հաշվի սպասարկման վճար - վարկի գումարի 0.5%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 20.000,0 ՀՀ դրամ:	
15.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար¹⁵, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանանագրեր/համաձայնագրեր: - Բնակելի տների/առանձնատների կառուցման նպատակով վարկերի տրամադրման դեպքում վարկի առավելագույն գումարը չպետք է գերազանցի հաճախորդի կողմից ներկայացված կառուցման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80 տոկոսը: - Կառուցման նպատակով վարկերը պետք է տրամադրվեն մասնաբաժիններով (տրանշերով), ընդ որում վարկի վերջին մասնաբաժնով պետք է ֆինանսավորվի շինարարական աշխատանքների վերջին փուլը և չպետք է գերազանցի վարկի գումարի 20 տոկոսը:	
16.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:	

3.1.7. Վերանորոգման վարկեր (Ազգային Հիփոթեքային Ընկերություն «Զերմ Օջախ» ծրագրի շրջանակներում)

1.	Վարկի տրամադրման նպատակը	Բնակելի անշարժ գույքի վերանորոգում՝ ուղղված էներգաարդյունավետության բարձրացմանը. ընդ որում վարկի միջոցների նվազագույնը 40%-ը պետք է ուղղված լինի բնակելի անշարժ գույքի էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված միջոցառումների և նյութերի/պարագաների ձեռքբերմանը այդ թվում՝ մինչև վարկի գումարի 20%-ը կարող է ուղղվել էներգախնայող կենցաղային սարգավորումների ձեռքբերմանը (Ծրագրի շրջանակներում ընդունելի էներգաարդյունավետ նյութերի/պարագաների ցանկը և դրանց նկատմամբ պարտադիր սահմանաչափերը սահմանվում են Ծրագրի համար մշակված Գործառնական Ձեռնարկում):
2.	Ովքեր կարող են դիմել	18– 63 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:
3.	Անշարժ գույքի վայրը	ՀՀ ամբողջ տարածքում, բացառությամբ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի
4.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ
5.	Վարկավորման գումար	275,000- 3,000,000 ՀՀ դրամ
6.	Վարկի մարման ժամկետը	60 - 84 ամիս
7.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	10.5%
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0,015 %, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0,1 %:
9.	Վարկի մարման ձևը	Տրամադրվում է 6-ամիս արտոնյալ ժամանակաշրջան՝ միայն տոկոսների ամենամսյա մարում: Արտոնյալ ժամանակաշրջանից հետո «Անուիտետային» կամ «Հսպանակաձև»:
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Երրորդ անձի /անձանց/ երաշխավորություն (անհրաժեշտության դեպքում)
11.	Բանկի կողմից գանձվող վճարներ	Վարկային հաշվի սպասարկման վճար - վարկի գումարի 0.5%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամ: Վարկի գումարի կանխիկ ստացման դեպքում գանձվում է կանխիկացման վճար՝ համաձայն Բանկում գործող սակագների:

¹⁵ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

		Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 70 15/02/2021թ.
12.	Այլ պայմաններ	Բնակելի անշարժ գույքի մեկ միավորը Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկային միջոցների հաշվին կարող է մի քանի անգամ վերանորոգվել:	
13.	Էներգաարդյունավետությամբ և գնահատում	Կարող է իրականացվել նաև հայտատուների կողմից՝ այցելելով jermojakh.com կայք դրամաշնորհի իրավունակությունն ու գումարը որոշելու նպատակով:	
14.	Դրամաշնորհ	Վարկառուն ստանում է վարկի պայմանագրային գումարի 5% դրամաշնորհ, սակայն ոչ ավել քան վարկի ընթացիկ մնացորդի չափով դրամաշնորհ, որն ուղղվում է վարկի մայր գումարի մարմանը, եթե վարկի գումարի 40% - ից ավելին օգտագործվում է էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված նյութերի/պարագաների ձեռքբերման նպատակով - Դրամաշնորհի տրամադրման նախապայման են հանդիսանում նաև ստորև ներկայացված դրույթները՝ - Իրականացված բոլոր միջոցառումների առնվազն 90%-ը պետք է հիմնավորված լինեն վճարումը հաստատող փատաթղթերով: - Եթե վարկառուն բացի էներգաարդյունավետ նյութերի/պարագաների ձեռքբերումից իրականացրել է նաև գույքի վերանորոգում, ապա անհրաժեշտ է ապահովել վերանորոգման աշխատանքներն ամփոփող նախնական և վերջնական լուսանկարներ և/կամ տեսաերիզ: Դրամաշնորհի հատկացման առաջարկը վարկառուին ներկայացնում է ԳՖՀ-ն: Դրամաշնորհը տրամադրվում է Վարկառուի համաձայնությամբ:	
15.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:	

3.1.8. Հիփոթեքային վարկ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»

1.		Առաջնային շուկա	Երկրորդային շուկա
2.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է երիտասարդ ընտանիքներին, գոյություն ունեցող կամ կառուցապատման ընթացքում գտնվող բնակելի անշարժ գույք ձեռքբերելու և մշտական բնակվելու նպատակով:	Վարկը տրամադրվում է երիտասարդ ընտանիքներին, գոյություն ունեցող (80 և ավելի տոկոս ավարտվածության աստիճան ունեցող) բնակելի անշարժ գույք ձեռքբերելու և մշտական բնակվելու նպատակով:
3.	Ովքեր կարող են դիմել	ՀՀ քաղաքացիները կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձինք, ում ամուսինը հանդիսանում է ՀՀ քաղաքացի: Ամուսինների գումարային տարիքը չպետք է գերազանցի 70-ը, կամ երիտասարդ միայնակ ծնողը, ում տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ): Որպես համավարկառու կարող են հանդիսանալ ամուսինների ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը (ընտանիքի անդամներ են համարվում՝ ամուսինը, վարկառուի և նրա ամուսնու ծնողները, քույրերը և եղբայրները): Համավարկառուների տարիքը չպետք է գերազանցի 61 տարեկանը	
4.	Համավարկառու	Վարկառուի ամուսինը և նրանց երկուսի ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը (ընտանիքի անդամներ են համարվում՝ ամուսինը, վարկառուի և նրա ամուսնու ծնողները, քույրերը և եղբայրները):	
5.	Վայրը	ՀՀ ամբողջ տարածքում	
6.	Վարկավորման արժույթ	ՀՀ դրամ	
7.	Վարկի մարման ժամկետը	120 - 180 ամիս	
8.	Վարկավորման գումար և վարկ/գրավ հարաբերակցություն	Երևանում և ՀՀ մարզերում՝ 27.75 միլիոն ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 80% ¹⁶ : Երևանում և ՀՀ մարզերում՝ 27.75 միլիոն ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 92.5%, եթե բավարարված է հետևյալ պահանջներից առնվազն մեկը. ա) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 80%, բ) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից ներկայացվում է նաև երաշխավորություն Հայաստանի Հանրապետության խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված՝ 1-ից 300	Երևանում և ՀՀ մարզերում՝ 22.5 միլիոն ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 70%: Երևանում և ՀՀ մարզերում՝ 22.5 միլիոն ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 90%, եթե բավարարված է հետևյալ պահանջներից առնվազն մեկը. ա) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 70%, բ) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից ներկայացվում է նաև երաշխավորություն Հայաստանի Հանրապետության խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված՝ 1-ից 300 տեղերը զբաղեցնող իրավաբանական անձանց

¹⁶ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

 Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 70 15/02/2021թ.
